https://doi.org/10.46991/hc.2025.si1.065

The study of the lives and activities of Armenian spiritual leaders as an direction in Armenian studies (according to the example of Gevorg E Surenyants)

Hasmik Amirjanyan
https://orcid.org/0009-0002-4363-0961
NAS RA, Institute of History, Senior Researcher, PhD
amirjanyan.hasmik@rambler.ru

Keywords - Armenian studies, spiritual leaders, Catholicos of All Armenians, documents, Gevorg Surenyants, The Armenian Apostol Church, reforms.

Today, in the field of studying the history of the Armenian Church, a direction is gradually emerging that is dedicated to illuminating the lives and activities of Armenian spiritual leaders, especially the Catholicoses of all Armenians. The primary foundation for such research consists of letters, reports, and records of spiritual figures.

The publication of documents, as well as unpublished memoirs, significantly contributes to and facilitates the complete restoration of the lives and activities of Armenian spiritual leaders. In these works, the activities of the Catholicoses, who assumed political functions in the absence of state power, are particularly emphasized, as they essentially represent manifestations of both the internal and external policies of the country. By engaging in economic, social, cultural, and educational activities within the country, they contributed to the development of all these spheres.

The article presents the role of a spiritual leader in various spheres of the country's life through the example of Catholicos of All Armenian Gevorg Surenyants.

Thus, by studying the history of various periods in the lives and activities of the Catholicoses and spiritual leaders of Armenia, we are essentially exploring Armenian history and developing Armenian studies, while translating these materials into other languages expands the horizons of Armenian studies.

History and Culture. Journal of Armenian Studies, special issue1, 2025, pp. 65-79.

Received: 14.11.2024
Revised: 16.02.2025
Accepted: 24.04.2025

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

© The Author(s) 2025

Հայ հոգևոր գործիչների կյանքի ու գործունեության ուսումնասիրությունը որպես հայագիտության ուղղություն (Գևորգ Ե Սուրենյանցի օրինակով)

Հասմիկ Ամիրջանյան
ՀՀ ԳԱԱ, պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող, պ.գ.թ.

Հիմնաբառեր - Հայագիտություն, հոգևոր գործիչներ, Ամենայն հայոց կաթողիկոս, վավերագիր, Գևորգ Սուրենյանց, հայ Առաքելական եկեղեցի, բարենորոգումներ:

Այսօր, հայոց եկեղեցու պատմության ուսումնասիրման բնագավառում աստիճանաբար առանձնանում է հայ հոգևոր գործիչների, հատկապես Ամենայն հայոց կաթողիկոսների կյանքի ու գործունեության լուսաբանման ուղղությունը: Նմանօրինակ ուսումնասիրությունների համար առաջնահերթ հիմք են հանդիսանում հոգևոր գործիչների նամակները, զեկուցումները, դիմումները, կոնդակները և այլն: Վավերագրերի, ինչպես նաև անտիպ հուշերի լույս ընծայումը մեծապես նպաստում և օժանդակում է հայ հոգևոր գործիչների կյանքի ու գործունեության ամբողջական վերհանմանը: Դրանցում հատկապես կարևորվում է պետականության բացակայության պայմաններում քաղաքական գործառույթներ ստանձնած կաթողիկոսների գործունեությունը, որն ըստ էության կազմում է երկրի ոչ միայն ներքին, այլև արտաքին քաղաքականության դրսևորումը: Իսկ երկրի ներսում զբաղվելով տնտեսական, հասարակական, մշակութային ու կրթական գործունեությամբ, նրանք նպաստել են այդ բնագավառների զարգացմանը:

Հոդվածում Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Սուրենյանցի օրինակով ներկայացված է հոգևոր գործչի դերը երկրի կյանքի տարբեր բնագավառներում: Կաթողիկոսի կյանքի ու գործունեության ուսումնասիրմամբ վեր են հանվում հայ ժողովրդի կյանքի տարբեր իրադարձությունների վերաբերյալ կարևոր դրվագներ:

Հայոց կաթողիկոսների ու հոգևոր գործիչների կյանքի ու գործունեության տարբեր ժամանակաշրջանների պատմությունն ուսումնասիրելով, մենք փաստացի ուսումնասիրում ենք հայոց պատմություն և զարգացնում հայագիտությունը, իսկ դրանք այլ լեզուներով թարգմանելու դեպքում ընդլայնում ենք հայագիտության սահմանները:

Изучение жизни и деятельности армянских духовных деятелей как направление арменоведения (на примере Геворга Суренянца)

Асмик Амирджанян
НАН РА, Институт истории, Старший научный сотрудник, к. и. н.

Ключевые слова - армяноведения, духовные деятелеи, Католикос Всех Армян, документ, Геворг Суренянц, Армянская Апостольская церков, реформы.

Сегодня в области изучения истории армянской церкви постепенно выделяется направление, посвященное освещению жизни и деятельности армянских духовных деятелей, особенно Католикосов всех армян. Первоочередной основой для таких исследования работы послужают письма и доклады, рапорта, кондаки духовных деятелей.

Публикация документов, а также неопубликованных воспоминаний значительно способствует и содействует полному восстановлению жизни и деятельности армянских духовных деятелей. В них особенно подчеркивается деятельность католикосов, которые взяли на себя политические функции в условиях отсутствия государственной власти, что по сути составляет проявление как внутренней, так и внешней политики страны. А занимаясь экономической, социальной, культурной и образовательной деятельностью внутри страны, они способствовали развитию всех этих сфер.

В статье представлен пример духовного деятеля Католикоса Всех Армян Геворга Суренянца и его роль в различных сферах жизни страны.

Мы считаем, что армянские историки проделали благодарную работу, что подчеркивает ценность архивных документов, а их перевод на другие языки значительно способствует расширению границ армяноведения. Таким образом, изучая историю различных периодов жизни и деятельности католикосов и духовных деятелей Армении, мы фактически исследуем армянскую историю и развиваем армяноведение, а перевод этих материалов на другие языки расширяет границы армяноведения.

* * *

Ամփոփ: Հայոց եկեղեցու տարբեր ժամանակաշրջանների պատմության հարցերը ուսումնասիրման նյութ են դարձել պատմագետների, գրականագետների, եկեղեցու պատմության ուսումնասիրողների և այլոց կողմից: Այդ հարցերում աստիճանաբար

առանձնանում է հայ հոգևոր գործիչների, հատկապես Ամենայն հայոց կաթողիկոսների կյանքի ու գործունեության լուսաբանման ուղղությունը[1]:

Ուսումնասիրելով հոգևոր գործչի՝ որպես անհատ, կյանքի ու գործունեության մանրամասները, վեր են հանվում նաև երկրի կյանքի կարևորագույն իրադարձությունների վերաբերյալ դեպքեր, իրադարձություններ, որոնք նախկինում ուսումնասիրողների ուշադրությունից դուրս են մնացել, ինչն էլ պայմանավորում է թեմայի գիտական նորույթը: Սույն դրույթից համապատասխանաբար բխում է թեմայի արդիականությունը: Վերջինը մեծապես պայմանավորված է նաև հայ առաքելական եկեղեցու պատմության տարբեր դրվագների նկատմամբ հետաքրքրության աճով:

Աշխատանքի մեթոդաբանական հետազոտության համար առաջնային հիմք են ծառայել տարբեր ժամանակաշրջաններում տպագրված մենագրությունները և փաստաթղթերի ու վավերագրերի ժողովածուները: Իսկ առանձին հոգևոր գործիչների կյանքի ու գործունեության դրվագների համար՝ նշված ուսումնասիրություններում ընդգրկված նամակները, գրությունները, հաշվետվությունները, զեկույցները, կոնդակները և այլն: Նշված նյութերի համադրման, համեմատման և վերլուծության մեթոդաբանությամբ փորձ է արվել Գևորգ Սուրենյանցի կյանքի ու գործունեության օրինակով վեր հանել և նորովի լուսաբանել հայ ժողովրդի կյանքում կարևորագույն այնպիսի իրադարձությունների ընթացքը, ինչպիսիք են Հայկական հարցի վերաբացման վերաբերյալ հայ հոգևոր, պետական, հասարակական լայն խավերի դիրքորոշումը, հարցի շուրջ ի հայտ եկող եվրոպական ու ռուսական շահերի բախումը և այլն:

Հայ հոգևոր գործիչների կյանքի ու գործունեության ուսումնասիրման հիմքը թերևս դրվեց XIX դ. երկրորդ կեսի և XX դ. սկզբի հայ հոգևոր և հասարակական-քաղաքական գործիչ Մաղաքիա Օրմանյանի (1841-1918) «Ազգապատում» աշխատության հրատարակմամբ: Չնայած հեղինակն ընդգծում է, որ ուսումնասիրությունը նվիրված է «Հայ ուղղափառ եկեղեցու պատմությանը», բայց քանի որ պետականություն չունեցող հայ ժողովրդի համար եկեղեցին կատարել է նաև պետական իրավասություններ, ապա այդ կոթողային աշխատության երեք հատորները յուրովի մեկնաբանում են ողջ ժողովրդի պատմությունը [Կոստանդյան, 2003, 258]: Մ. Օրմանյանն առաջին հատորում նշում է նմանօրինակ աշխատության անհրաժեշտության դրդապատճառը, այն է՝ «Գիտենք թէ

[1] Հոդվածի վերնագիրը բխում է այն մտայնությունից, որ եկեղեցու գործունեությունը, լինելով հայագիտության ուղղություն, աստիճանաբար ուրվագծվում է այդ ուղղության մի առանձին ճյուղը՝ հոգևոր գործիչների կյանքի ու գործունեության ուսումնասիրությունը: Վերջինս, ժամանակի ընթացքում գրավելով ուսումնասիրողների ուշադրությունը, այսօր ընդլայնվելու միտում ունի, հետևաբար, կարող ենք որոշակի վերապահումով այն համարել եկեղեցու պատմության, այդ թվում՝ հայագիտության ուղղություն: Ելնելով վերոնշյալից, ամփոփման մեջ շեշտվում է, որ այսօր աստիճանաբար առանձնանում է հայ հոգևոր գործիչների կյանքի ու գործունեության լուսաբանման ուղղությունը:

ամենամօտ ժամանակներու մէջ, ազգային եկեղեցական պատմութիւնն սկսած է իր ուղղամիտ ուսումնասիրողներն ունենալ, սակայն գործը դեռ իր լրումը չէ ստացած» [Մաղաքիա Օրմանեան, Ազգապատում, հ Ա.]:

Աշխատության մեջ Օրմանյանն իր վերաբերմունքն է արտահայտում հայ ժողովրդի պատմության առանցքային հացերի նկատմամբ՝ ռուս-պարսկական պատերազմներ, Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին, Հայկական մարզի կազմավորում, հայ եկեղեցու վերաբերյալ ընդունած կանոնադրություն, ցարիզմի գաղութային քաղաքականություն, արևմտահայ ազգային սահմանադրություն, Հայկական հարց և այլն [Կոստանդյան, 2003, 258]: Ազգապատումի արժեքը անգնահատելի են դարձնում հայ եկեղեցական գործիչների կյանքի ու գործունեության դրվագները՝ հասարակական-քաղաքական, հոգևոր-մշակութային, տնտեսական և այլն՝ սկսած Գրիգոր Լուսավորչից մինչև 1909 թվականը:

Ընբռնելով նշանավոր անհատի վերաբերյալ գիրք գրելու դժվարություններն ու պատասխանատվությունը, Օրմանյանը գտնում է, որ նմանօրինակ աշխատանք ստանձնելու դեպքում պետք է առաջնորդվել ոչ թե լսածով, այլև իրականությունը կշռադատելով, այլապես «...դժուար և դժպիի կըլլար ժամանակակից անձերու վրայ համարձակօրէն խօսիլ: Ասով մէկտեղ մենք պարտաւորութիւն կը սեպենք դժուարութենէ չխուսափել, և մեր ստանձնած պատմագիրի պարտքը անաչառութեամբ կատարել: Այդ նպատկով հարկ կըլլայ ոչ այնչափ խօսողներուն կամ գրողներուն հինաւուրց կամ արժնահաւատ լինելուն վրայ հիմնուիլ, որչափ իրողութիւնները կշռել իրենց իսկութեան մէջ…» [Օրմանեան, 1914, Բ, 3233]:

Այնուհետև Գյուտ քահանա Աղանյանցի (1856-1920) կողմից հրապարակված «Դիվան հայոց պատմութեան» մատենաշարը հրապարակ բերեց նոր ուղղվածություն՝ դիվանական վավերագրերի հրատարակություն: Մատենաշարն սկսվեց հրատարակվել 1890 թվականից և շարունակվել մինչև 1917 թ.: Այն բաղկացած է 13 գրքից՝ ընդգրկելով հիմնականում կաթողիկոսների և հոգևոր այլ գործիչների[1] գրավոր փաստաթղթերի կամ դրանց սևագրությունների օրինակները: Փաստորեն, Գյուտ Աղանյանցի կողմից կյանքի կոչված շարքի հրատարակմամբ պատմագիտության մեջ հիմնադրվեց և հետզհետե կարևոր նշանակություն ձեռք բերեց վավերագրական նյութերի՝ նամակներ, դիմումներ, խնդրագրեր, հրովարտակներ, կոնդակներ, գիտական շրջանառության մեջ դնելու ուղղությունը: Նա գրում է, որ կարևոր է ընթերցողին ու ուսումնասիրողին ծանոթացնել հայ մտքի անցյալ արդյունքներին, և այդ նպատակով որոշեց ձեռնարկել «Դիւան հայոց

[1] Տե՛ս Դիվան հայոց պատմութեան, գիրք Գ, Սիմէոն կաթողիկոսի հիշատակարանը, Թիֆլիս, 1894, Գիրք Ը, մասն II, Թիֆլիս, 1908, Գիրք ԺԱ, մասն III, Թիֆլիս, 1913: Գիրք Դ, Ղուկաս կաթուղիկոս (1801-1800), Թիֆլիս, 1899, Գիրք Ե, Դանիել կաթուղիկոս (1800-1808), Թիֆլիս, 1902, Գիրք Զ, Դաւիթ կաթուիկոս, մասն առաջին (1781-2), Թիֆլիս, 1904, Գիրք Է, մաս երկրորդ (1803-4), Թիֆլիս, 1909, Գիրք Թ, Յովսէփ կաթողիկոս Արղութեան (1778-1800), Թիֆլիս, 1911, Գիրք ԺԲ, Մանուել Կիւմիշխանեցի, մասն I, Թիֆլիս, 1917:

պատմութեան» հրատարակությունը որը «...բացառապէս կը բովանդակէ իւր մէջ պատմական նիւթեր-պաշտօնական թղթեր, կոնդակներ, հրովարտակներ, յայտնի անձերի գրագրութիւններ և նամակներ, յիշատակարաններ, ժամանակագրութիւն և առ հասարակ ամեն տեսակ վաւերագրեր» [Աղանեանց, 1893, Դ]:

Գ. Աղանյանցից հետո, սակայն, կարծես այդ ուղղությունը որոշակի անկում ապրեց: Թերևս միակ աշխատանքը 1901 թ. հրապարակված «Գիրք թղթոց» ժողվածուն է, որը 1994 թ. վերահրատարակվել է Նորայր արք. Պողոսյանի կողմից: Նոր հրատարակության մեջ նկատի են առնվել նաև Հ. Գյուլխանդանյանի, Ն. Ակինյանի և Լ. Մելիքսեթ-Բեկի կողմից մինչ այդ շրջանառության մեջ դրած մի շարք բնագրեր [Բոզոյան, 2003, 254]:

1902 թ. լույս տեսավ Լեոյի Առաքել Բաբախանյան (1860-1932) «Յովսէփ կաթողիկոս Արղութեան» փոքրածավալ գիրքը: Այն ընդգրկում է հիմնականում նրա «Հայոց պատմության» մեջ զետեղված դասախոսությունների՝ Հ. Արղությանին վերաբերվող հատվածները՝ համեմված հայոց պատմության ընդարձակ դրվագներով: Այդուհանդերձ, Լեոն Հովսեփ Արղությանի գործունեությանն իր ամբողջության մեջ անդրադարձած առաջին պատմաբանն էր, որն իր ուսումնասիրությունը լույս ընծայեց մենագրության տեսքով, ինչն էլ Ա. Հատիտյանին հիմք է տվել նրան անվանել Հ. Արղությանի կենսագիր [Հատիտյան, 1978, 72-73]:

Լեոն նշում է, որ Հովսեփ Արղությանի վերաբերյալ գրավոր հիշատակություններ շատ կան, իսկ ինքը ձեռքի տակ ունեցել է գրեթե այն ամենը, ինչ տպված էր մինչև այդմ: Հետևաբար, Լեոյի ուսումնասիրության տեսադաշտից դուրս են մնացել Արղությանի ձեռագիր գրությունները: Պատահական չէ, որ անվանի պատմաբանը գրում է. «Բայց պետք է խոստովանել, որ այդ տպագրական աղբիւրները շատ քիչ են՝ այդ նշանաւոր հայի ամբողջ պատկերը նկարելու համար. պաշտօնական, չոր ու ցամաք, միակողմանի են հրապարակում եղած տեղեկութիւնները» [Լէօ, 1902, 1]:

Լեոյի պատմագիտական հայեցակարգում կարևորվում է Հայաստանը թուրք-պարսկական տիրապետությունից ազատագրելու Արղությանի քաղաքական ծրագրի էության բացահայտումը: Պատահական չէ, որ Լեոն Արղությանին դասում է հայ ամենանշանավոր եկեղեցականների շարքին. «XVIII դարում մենք ունինք մի քանի հոգեւորական քաղաքագէտներ. Մինաս վարդապետը և Գանձասարի Եսայի կաթողիկոսը: Սակայն Յովսէփ Արղութեանը այս երկուսից էլ շատ նշանաւոր հանդիսացաւ և եթէ կան մեր հոգևորականութեան մէջ այնպիսի քաղաքագէտներ, որոնք կարող են Արղութեանի արժանաւոր դասակիցները դառնալ, դրանք միայն երկու հոգի են XIX դարում-Ներսէս Աշտարակեցի կաթողիկոսը և Ներսէս Վարժապետեան պատրիարքը» [Լէօ, 1902, 13]:

Մատենադարանում զետեղված Հովսեփ Արղությանի հավաքածուն քիչ թե շատ համակողմանի ուսումնասիրել է անվանի պատմաբան Ա. Հովհաննիսյանը, որն իր աշխատության[1] մեջ ներկայացրել է հայ ժողովրդի ազատագրական պայքարում Ռուսաստանի աջակցությունն ակնկալող գործիչների գործունեությունը:

Գյուտ Աղանյանցի գործունեությանը հոդվածաշարերով անդրադարձավ Տ. Արարատ քահանա Պողոսյանը՝ գտնելով, որ Հայ Եկեղեցու պատմության նկատմամբ հետաքրքրության մեծացմանը զուգահեռ մեծ անհրաժեշտություն է առաջանում ուսումնասիրել ու արժևորել այդ մարդու արդյունաշատ գործունեությունը՝ ժամանակի հասարակական-քաղաքական, հրատարակչական-եկեղեցական կյանքի ընդհանուր համապատկերում [Տ. Արարատ քահանա Պողոսյան, 2015, 151]:

Ըմբռնելով վավերագրերի հրատարակման կարևորությունն ու անհրաժեշտությունը, Մատենադարանի գիտական խորհուրդը որոշեց նոր շարքով շարունակել Գ. Աղանյանցի մատենաշարի հրատարակությունը: Կաթողիկոսական դիվանի վավերագրերի գիտական մշակման, ուսումնասիրման ու հրապարակման գործում մեծ աշխատանք կատարեց Վարդան Գրիգորյանը (1929-2019), որը ձեռնարկեց «Դիվան հայոց պատմության» նոր շարքի հրատարակությունը: Այն ընդգրկում է XVIII դ. վերջին տասնամյակների նշանավոր եկեղեցական ու քաղաքական գործիչ Ղուկաս Կարնեցու նամակագրությունը՝ առաջին (1984 թ.) և երկրորդ (2003 թ.) հատորներով: Վ. Գրիգորյանի մահից հետո, 2023 թ. լույս տեսավ շարքի երրորդ հատորը՝ Արսեն Հարությունյանի համահեղինակությամբ՝ ընդգրկելով Ղուկաս Կարնեցու նամակագրության չհրապարակված հատվածները: Հաջորդաբար նախատեսված է հրատարակել Եփրեմ Ձորագեղցու, Հովհաննես Կարբեցու և Ներսես Աշտարակեցու գրությունները:

Պատմական գիտությունների դոկտոր Էմմա Կոստանդյանն (1934-2014) այն սակավաթիվ պատմաբաններից էր, ում գիտական ժառանգության գերակշռող մասը, չնայած նրա բազմաբովանդակ և տարաբնույթ հետաքրքրություններին, նվիրված էր Հայոց եկեղեցու և դրա երախտավորների գործունեության պատմության ուսումնասիրությանը: [Սարգսյան, 2016, 152]: Է. Կոստանդյանի աշխատություններից մեկը նվիրված է XIX դարի երկրորդ կեսի հայ հասարակական-քաղաքական, գրական-իմաստասիրական հոգևոր ականավոր գործիչ, Ամենայն հայոց կաթողիկոս Մկրտիչ Ա Վանեցու (Մկրտիչ Խրիմյան) կամ Ամենայն հայոց հայրիկի գործունեության քննությանը: Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի դաշնության տարբեր արխիվներից հայտնաբերված վավերագրերի, ժամանակի մամուլի, հուշագրությունների և պատմագիտական գրականության հիման վրա լուսաբանված են Մկրտիչ Խրիմյանի կյանքի և գործունեության շրջափուլերը, բացահայտված է նրա տեղն ու դերը Հայկական հարցի

[1] Иоаннисян А., Россия и армянское освободительное движение в 80-ых годах XVIII столетия, изд. АН, Арм. ССР, 1990, 195 с.

արծարծման, 19-րդ դարի վերջի և 20-րդ դարի սկզբի ազգային-ազատագրական շարժումների մեջ: [Կոստանդյան, 2008ա, 440]:

2008 թ. վերահրատարակվեց Է. Կոստանդյանի գիրքը՝ բանագետ, բանահավաք, ազգագրագետ և Հայ առաքելական եկեղեցու նվիրյալ հոգևորական Գարեգին Սրվանձտյանցի վերաբերյալ: «Արխիվային փաստաթղթերի, ժամանակակիցների նամակների և ստեղծված գրականության մանրակրկիտ ուսումնասիրությունը բերում է այն համոզման, որ Գ. Սրվանձտյանցը 19-րդ դարի երկրորդ կեսին Արևմտյան Հայաստանի բնատարածքում կատարել է գործնական մեծ աշխատանք՝ հայրենասիրական, ժողովրդապահպանման, ազատագրական շարժումների նախապատրաստման, գյուղացիական զանգվածներից հարկերի բռնագանձումը մեղմացնելու ուղղությամբ»,- գրում է Էմմա Կոստանդյանը [Կոստանդյան, 2008, 53]:

Է. Կոստանդյանի հաջորդ՝ Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանին նվիրված աշխատությունը բաղկացած է երկու մասից, որոնք ընդգրկում են թեմային անմիջականորեն առնչվող՝ տարբեր հանդեսներում տպագրված հեղինակի գիտական հոդվածները և հիմնահարցը ներառող անտիպ նյութեր: Հեղինակը սույն աշխատությունում արխիվային վավերագրերի, մեծաքանակ սկզբնաղբյուրների, ժամանակի մամուլում սփռված նյութերի, հուշագրությունների և գիտական ուսումնասիրությունների հիման վրա ներկայացրել է եկեղեցական գործիչ, աստվածաբան, հայագետ, պատմաբան, բանասեր, հրապարակախոս, ազգային անխոնջ գործիչ Մ. Օրմանյանի հասարակական-քաղաքական, հոգևոր և գիտական գործունեության մի շարք հիմնահարցեր [Սարգսյան, 2025, 152-153]:

«Կաթողիկոս Ներսես Աշտարակեցու գործունեությունը XIX դարի առաջին կեսի Հայաստանի քաղաքական պատմության հարցերի ուսումնասիրման ընթացքում մշտապես ուշադրություն է գրավել, արտացոլելով եկեղեցու՝ որպես քաղաքական ինստիտուտի և համայն հայության հոգևոր կենտրոնի նշանակությունը, ներկայացնելով Հայկական հարցը Ռուսաստանի, Պարսկաստանի և Օսմանյան Թուրքիայի միջև հարաբերություններում»-գրում է Վ. Թունյանը՝ հայոց եկեղեցու մեծ երախտավորի վերաբերյալ իր մենագրության մեջ [Тунян Валерий, Защитник отечества - Католикос Всех Армян Нерсес Аштаракеци, 1826 - 1857 гг.]:

Նշված ուղղությունը կրկին ուշադրության կենտրոնում հայտնվեց շնորհիվ Սանդրո Բեհբուդյանի (1934-2004), որը ձեռնարկեց «Վավերագրեր Հայ Եկեղեցու Պատմութեան» մատենաշարը, որի առանձին հատորներ կազմում են մի շարք հայ հոգևոր գործիչների (Գևորգ Ե Սուրենյանց, Խորեն Ա Մուրադբեկյան, Գևորգ Զ Չորեքչյան, Գարեգին Հովսեփյան և այլոց) վերաբերյալ արխիվային նյութերը:

2021 թ. հրատարակվեց Հ. Ամիրջանյանի «Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանի անտիպ աշխատությունները» մենագրությունը, որն ընդգրկում է XVIII դարի հայ հոգևոր, մշակութային ու քաղաքական գործիչ, Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանի (1773-1801) «Օրագրութիւն» և «Դաւթար» անտիպ աշխատությունները: «Օրագրութիւնը», որն ընդգրկում է 1778-1793 թվականները, արժանահավատ և փաստերի հիման վրա ներկայացված ականատեսի վկայություն է, ռուսահայ գաղթօջախի քաղաքական, սոցիալական-տնտեսկանան ու մշակութային տարբեր հարցերի ուսումնասիրման սկզբնաղբյուր: Առաջիկայում նախատեսվում է հրատարակել Հովսեփ Արղությանի կյանքի ու գործունեության վերաբերյալ մենագրություն՝ հայերեն և ռուսերեն լեզուներով:

Վերջերս հրապարակի վրա դրվեց Ք. Հայրապետյանի «Խորեն Մուրադբեկյանի հոգևոր և հասարակական գործունեությունը (1901-1938 թվականներին)» ատենախոսությունը:

Կարծում ենք, այս շարքը շարունակվելու և ավանդույթ դառնալու միտում ունի: Սակայն լավ կլինի որ դրա հետ մեկտեղ գրվի հայոց եկեղեցու ամբողջական պատմությունը, տպագրվեն հայ առաջատար եկեղեցիների ու նրանց երևելի դեմքերի վարքն ու գործունեությունը վերհանող գրքեր, պատրաստվեն հայոց առաքյալների ու կաթողիկսների կենսագրություններն ամբողջացնող գիտական լուրջ հրատարակություններ և այլ արժեքավոր աշխատություններ [Մաղալյան, 208]:

Հոգևոր գործիչների կյանքի ու գործունեության ուսումնասիրման ենթափուլերը: Վավերագրերի, անտիպ հուշերի լույս ընծայումով կամ հոգևոր գործիչների կյանքի ու գործունեության ամբողջական հրատարակումով սեղանի վրա են դրվում սկզբնաղբյուրային նշանակության կարևոր գործեր, որոնց հիմքի վրա գրվում են նոր աշխատություններ և տեղի են ունենում ատենախոսությունների հրապարակային պաշտպանություններ:

Դրանցում նյութը համակարգված է ըստ ժամանակագրության, ինչն ավելի է դյուրացնում ուսումնասիրողների աշխատանքը: Կարծեք ավանդույթ է դարձել հոգևոր գործիչների թողած ժառանգության ուսումնասիրման ընթացքում առաջնորդվել ըստ նրանց գործունեության բնագավառների՝ սոցիալ-տնտեսական, հոգևոր-մշակութային և հասարակական-քաղաքական:

Նոր և նորագույն ժամանակաշրջանների հոգևոր գործիչների կյանքի ու գործունեության ուսումնասիրման ընթացում կարող ենք առանձնացնել մինչխորհրդային (պարսկական և ցարական տիրապետության շրջան) և դրանից հետո ընկած ժամանակահատվածի նյութերը:

Մինչխորհրդային ժամանակաշրջանն ընդգրկող նյութերը մեծապես օգտակար են XVII-XVIII դարերի հայ, ինչպես նաև հարևան ժողովուրդների պատմության

ամենատարբեր դրվագների ուսումնասիրման տեսանկյունից: Դրանցում կարևորվում են հոգևոր գործիչների կապերը, նամակագրությունը ռուս պետական ու քաղաքական գործիչների հետ՝ ինչպես օրինակ Ռուսաստանի XVIII դ. երկրորդ կեսի անդրկովկասյան արշավանքների ընթացքում, երբ դրված էր դեպի հարավ արշավող ռուսական զորքին աջակցություն ցուցաբերելու հարցը: Վեր են հանվում հայ-պարսկական, հայ-վրացական հարաբերությունների առանձնահատկությունները:

Հետխորհրդային ժամանակաշրջանի նյութերն օգնում են բազմակողմանի լուսաբանելու նոր իշխանությունների վերաբերմունքը հայոց եկեղեցու և առհասարակ կրոնի նկատմամբ, հոգևոր գործիչների վերաբերմունքը նոր իշխանությունների նկատմամբ, հայ եկեղեցու առջև ի հայտ եկած նոր մարտահրավերները:

Կարևորվում է նաև կաթողիկոսների կողմից իրագործված շինարարական և կրթա-մշակութային գործունեությունը: Կաթողիկոսների մշակութային գործունեությունը հատկապես դրսևորվեց Մայր տաճարի վերանորոգչական և շինարարական աշխատանք-ների կազմակերպման հարցում: Հայ եկեղեցու պատմության ընթացքում էջմիածնի հոգ-ևոր առաջնորդների միջև կարծես մի ներքին, չհայտարարված մրցակցություն էր գնում էջմիածնի տաճարն ավելի բարեկարգելու, հինը վերանորոգելու, նոր կառույցներ ավելաց-նելու ուղղությամբ: Նրանցից շատերը հանդես եկան որպես տպագրական գործի, դպրոցական կյանքի, մշակույթի զարգացման հետևորդներ՝ դառնալով ժամանակի հայագիտությանը զարկ տվողները:

Գևորգ Ե Սուրենյանցի կյանի ու գործունեության ուսումնասիրությունը որպես հայոց պատմության կարևոր ժամանակաշրջան: Գևորգ Սուրենյանցի [1847-1930] կյանքի ու գործունեության ուսումնասիրման օրինակով դիտարկենք հայոց պատմության տարբեր ժամանակաշրջանների աչքի ընկնող և չուսումնասիրված որոշ իրադարձությունների ընթացքին:

Կաթողիկոսը հովվել է ազգին 1911-1930 թվականների ընթացքում, մի բազմաշերտ պատմափուլ՝ բաղկացած պատմական տարբեր ժամանակաշրջաններից՝ ցարական տիրապետություն, Հայկական հարցի վերաբացում, հայոց ցեղասպանություն, ռուսաստանյան հեղափոխություններ, Հայաստանի առաջին հանրապետություն, թուրք-հայկական պատերազմ, խորհրդային հասարակարգ և այլն: Տարբեր մարտահրավերներով ու դժվարություններով լի այդ ժամանակաշրջաններում ի հայտ եկած ամենատարբեր իրադարձություններն էլ պայմանավորեցին հոգևոր առաջնորդի բազմաբնույթ գործունեությունը: Բացի նշվածներից, կարևորվում էին եկեղեցու հիմնախնդիրները, այդ թվում՝ եկեղեցու ավանդական իրավունքների պահպանմանն ուղված քայլերը:

Թերևս այդ շարքում կարևորվում է հայոց պատմության կարևորագույն հարցի՝ Հայկական հարցի վերաբացումը: Հայ պատմագիտության մեջ հավասարապես կարևորվել է ինչպես բուն Հայկական հարցի առաջացման, այնպես էլ հետագա զարգացման՝ այդ թվում վերաբացման հիմնախնդիրները, ինչում մեծ դեր կատարեց հայոց եկեղեցին՝ ի դեմս կաթողիկոսի: Կաթողիկոսի բազմաթիվ նամակները բացահայտում են հայ հոգևոր, պետական, հասարակական լայն խավերի դիրքորոշումը հարցի նկատմամբ, ինչը բխում էր արևմտահայության նկատմամբ թուրքական կառավարության հալածանքների ուժգնացումից, Հայկական հարցի շուրջ ի հայտ եկող եվրոպական ու ռուսական շահերի բախումը և այլն:

Հայկական հարցի քննարկումների արդյունքում, ինչպես գիտենք, ի հայտ եկավ Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ իրականացնելու անհրաժեշտություն: Քաղաքական գործառույթներ ստանձնած Գևորգ Ե-ն հասկանալով, որ արտաքին ճնշումը միակ միջոցն է՝ ստիպելու Թուրքիային իրագործել բարենորոգումներ, փորձում էր Եվրոպայի ու Ռուսաստանի ուշադրությունը բևեռել այդ հարցի վրա: Այնինչ, եվրոպական պետությունները հայկական բարենորոգումները դիտելով որպես երաշխիք Թուրքիայի ամբողջականության պահպանման և տնտեսական բարգավաճման համար, հետևողական չեղան այդ հարցում:

Կաթողիկոսի գործունեությունն այդ շրջանում, նրա հարաբերությունները ռուսական ու եվրոպական գործիչների հետ կազմում են ինչպես հայ-ռուսական, այնպես էլ Հայաստանի և եվրոպական երկրների միջև հարաբերությունների մի կարևորագույն էտապը և լույս են սփռում մեծ տերությունների կողմից Հայկական հարցի նկատմամբ ունեցած դիրքորոշման վրա: Թիֆլիսի Հայոց ազգային բյուրոյի[1] 1913 թ. փետվարի 23-ի նամակում՝ ուղղված կաթողիկոսին, շեշտվում է, որ հայոց կաթողիկոսն է «այսօր ճանաչւում Հայոց դատի պաշտօնական իրաւատերը» [Բէհբուդեան, 2005, 139]:

Արևմտյան Հայաստանում բարենորոգումների իրականացման համար կաթողիկոսի պայքարը շարունակվեց նաև 1914 թ. և դրանից հետո, թեև ըստ ամենայնի, արդյունք չտվեց: Սակայն նրա հավանությամբ Եվրոպայում ստեղծված «հայասէր կոմիթէների» աշխատանքները Հայ դատի համար նպաստավոր կարծիք ստեղծելու ճանապարհին օգտակար և հայանպաստ եղան [ՀԱԱ, ֆ. 282, գ. 41, թ. 14]: Բացի այդ, նրա գործունեությունը նպաստեց, որ ևս մեկ անգամ բարձրաձայնվի Հայկական հարցը, որն առ այսօր մնում է հայագիտության կողմից քննարկվող կարևորագույն հարցերից մեկը, հետևաբար այն չի կորցրել իր արդիականությունը և սպասում է իր լուծմանը:

[1]Թիֆլիսի ազգային կենտրոնական բյուրոն ձևավորվել է 1912 թ. հոկտեմբերին՝ ռուսական կայսրության հայաշատ կենտրոնների ներկայացուցիչների համագումարի խորհրդակցության արդյունքում: Նպատակն էր օգտվել 1912-1913 թթ. բալկանյան պատերազմների հետևանքով ստեղծված իրադրությունից և հասնել Հայկական հարցի լուծմանը: Բյուրոյի կազմում տիրապետող դիրք ուներ դաշնակցությունը: 1917 թ. դադարում է գործելուց:

1918 թ. մայիսի 28-ին նոր կազմավորված Հայաստանի առաջին Հանրապետության առաջ ծառացած բազմաթիվ հարցերի շարքում շարունակում էր կարևորվել Հայկական հարցի լուծման ընթացքը: Այդ ուղղությամբ իր բեղմնավոր գործունեությունն էր ծավալում Գևորգ Ե-ի կողմից կյանքի կոչված և դեռևս Եվրոպայում գտնվող Պողոս Նուբարի Ազգային պատվիրակությունը:

Հարցի պատմության կարևորագույն և վճռորոշ էտապներից էր 1920 թ., երբ Եվրոպայում մեծ տերությունների կողմից կազմակերպվող վեհաժողովներում վճռվում էր Թուրքիայի ճակատագիրը: Պետական մարմինների կազմավորմանը զուգընթաց, ՀՀ կառավարությունն աստիճանաբար իր ձեռքն է վերցնում արտաքին քաղաքականության բոլոր ուղղությունները և Եվրոպա է ուղարկում կառավարական ներկայացուցչություն՝ Ավետիս Ահարոնյանի ղեկավարությամբ: Փաստացի Եվրոպայում սկսում է գործել երկու պատվիարկություն:

Պատվիարկությունների անջատ-անջատ գործունեությունը դժվարություն է հարուցում Հայկական հարցի լուծման ճանապարհին: Հետևաբար առաջ է գալիս դրանք միավորելու և Ազգային միացյալ պատվիրակություն ստեղծելու անհրաժեշտություն, ինչին կողմ էր նաև կաթողիկոսը: Նա ցավով է ընդունում առկա խոչընդոտները, որոնք խանգարեցին պատվիրակությունների միավորմանը, երբ դրված էր Հայկական հարցի լուծման և միացյալ Հայաստանի ձևավորման խնդիրը:

Հայոց կաթողիկոսի անհանգստությունը մեծ էր հատկապես Արևմտյան Հայաստանում Օսմանյան Թուրքիայի կառավարության հակահայկական գործունեության հետևանքով մեծ չափերի հասած հայ բնակչության արտագաղթի հարցում: 1914 թ. ապրիլի 28-ին Գևորգ Սուրենյանցը Կ.Պոլսի հայոց պատրիարքին ուղղած կոնդակում առաջարկում է տեղի ազգային գործիչների հետ համատեղ քննարկումներ կատարել, ծրագիր մշակել և կազմել մասնաժողով՝ կանխելու արտագաղթը և դյուրացնելու հայ գաղթականների վերադարձը [Բէհբուդեան, 2005, 236]:

Առաջին Համաշխարհային պատերազմն (1914-1918) իր հերթին նպաստեց, որ Արևմտյան Հայաստանի ամբողջ տարածքում հայ բնակչությունը պարբերաբար լքի բնակավայրերը, ինչից հետո կաթողիկոսն ավելի վճռական քայլերի դիմեց: Նա 1914 թ. աշնանը կոնդակներով պատերազմի դաշտ է ուղարկում իր պատվիրակներին՝ հանձնարարելով օգնել արևմտահայ բնակչությանը՝ մնալ տեղում և կազմակերպել ինքնապաշտպանություն: Այնուհետև 1914 թ. նոյեմբերի 7-ին Գևորգ Սուրենյանցը հատուկ կոնդակով դիմեց Կովկասի փոխարքա կոմս Ի. Վորոնցով-Դաշկովին [1905-1915] և թույլտվություն ստացավ կազմակերպել եղբայրական օգնության գործը և կամավոր միջոցներ հավաքել, ինչպես նաև ստեղծել կենտրոնական հանձնաժողով փախստական

հայերին ու պատերազմից վնասվածներին օգնելու համար [Բալյան Արշակ, Տարեգիրք, 2015, 137-138]: Նոյեմբերի 22-ին թեմական առաջնորդներին ուղղված կաթողիկոսի կոնդակով մի շարք վայրերում բացվում են եղբայրական օգնության հանձնաժողովներ:

Այսպիսով, կաթողիկոսի գործունեությունը լույս է սփռում առաջին համաշխարհային պատերազմի տարիներին ոչ միայն հայ գաղթականության վիճակի, նրանց ցուցաբերված օգնության, այլև գաղթի ուղղությունների, Հայաստանի սահմաններից դուրս նրանց կուտակման, հայրենիք վերադարձի և այլ կարևորագույն հարցերի վրա: Կարևորվում են հարցի առնչությամբ կաթողիկոսի դիմումներն ու խնդրանքները ինչպես հայ, այնպես էլ ռուս և եվրոպացի պետական գործիչներին:

Հատկանշական է, որ անգամ ՀՀ գոյության պայմաններում երկրի քաղաքական ու պետական բնագավառների մի շարք ուղղություններ շարունակում էին մնալ կաթողիկոսի վերահսկողության ներքո: Դա ուներ մի շարք պատճառներ, այդ թվում՝ նորանկախ պետության առջև ծառացած բազմաթիվ խնդիրներ, որոշ հարցերում եկեղեցու գործունեության ավանդույթի պահպանում և այլն: Պատահական չէ, որ կաթողիկոսն է պետության, մասնավորապես արտգործնախարարի ուշադրությունը դարձնում 1919 թ. դրությամբ Միջագետքում ապաստանած հայերի խնդիրի վրա: Կաթողիկոսը նամակներ էր ստացել Բաղդատի ու Ատրպատականի հոգևոր ներկայացուցիչներից, որոնք խնդրում էին նշված վայրերից հայ գաղթականների ներգաղթ կազմակերպել դեպի Արևելյան Հայաստան:

Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումից հետո Հայ Առաքելական եկեղեցին իր ողջ համակարգով նոր իշխանությունների համար հանդիսանում էր հակահեղափոխական-հակախորհրդային հիմնարկություն: Կենտրոնական իշխանությունը ձևավորումից գրեթե անմիջապես հետո ձեռնամուխ եղավ եկեղեցու դեմ պայքարի ծրագրի կենսագործմանը: 1920-ական թվականների սկիզբն առավել ծանր եղավ Հայոց եկեղեցու համար, երբ պետությունը մեկը մյուսի ետևից բռնագրավում էր Մայր Աթոռ Ս. Էջմիածնի շինությունները, կենցաղային, կրթամշակութային և այլ հիմնարկությունները՝ այդ թվում ճեմարանը, գույքն ու սեփականությունը, դպրոցը անջատվում է եկեղեցուց, դպրոցներում արգելվում է կրոնական բնույթի դասընթացների դասավանդումը և կրոնական ծեսերի կատարումը:

Ըստ այդմ կարևորվում է Գևորգ Ե-ի ջանքերը՝ հնարավորինս պահպանելու հայ եկեղեցու դարերի ընթացքում ձևավորված իրավունքները, եկեղեցին զերծ պահելու սկսված բռնաճնշումներից: Նրա գործունեությունը լավագույնս արտացոլում է Խորհրդային Հայաստանում ձևավորված եկեղեցի-պետություն նոր փոխհարաբերությունները, Հայոց եկեղեցու դիրքը, իրավունքները, նոր իշխանությունների վերաբերմունքը և այլն, ինչը տարիներ շարունակ ուշադրության չի արժանացել: Ուշադրության արժանի են կաթողիկոսի նորահայտ դիմումները Խորհրդային

Հայաստանի պետական գործիչներին՝ փորձելով մեղմել հայ եկեղեցու նկատմամբ սկսված անհանդուրժողական մթնոլորտը:

Կաթողիկոսը շարունակում է բարձրաձայնել Հայոց եկեղեցու խնդրահարույց հարցերը, որոնցից կարևորագույնը, որից կախված էր եկեղեցու ինքնուրույն լինել չլինելը, Ազգային-եկեղեցական ժողով գումարելու իրավունքն էր: ՀԽՍՀ ժողկոմխորհին ուղղած գրության մեջ նա կառավարությանը հիշեցնում է, որ համաձայն Հայոց ազգային եկեղեցու կանոնների՝ եկեղեցական բարեկարգության ծանրակշիռ հարցերին լուծում տվողը և կանոնադիր մարմինը Ազգային եկեղեցական ժողովն է, որն ըստ ավանդության հրավիրում և նախագահում է Ամենայ հայոց կաթողիկոսը՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնում:

Եզրակացություններ: Այսպիսով, ուսումնասիրելով հայոց կաթողիկոսների ու հոգևոր գործիչների կյանքի ու գործունեության տարբեր ժամանակաշրջանների պատմությունը, մենք փաստացի ուսումնասիրում ենք հայոց պատմություն և զարգացնում հայագիտությունը, իսկ դրանք այլ լեզուներով թարգմանելու դեպքում ընդլայնում ենք հայագիտության սահմանները:

Գրականության ցանկ

Aghaneants' 1893 – Aghaneants' G., Diwan hayots' patmut'ean, T'iflis, tparan N. Sharadze, 1893, D, 326 ej: **(in Armenian)**

Balyan 2015 - Balyan A., Ejmiatsni yeghbayrakan ognut'yan glkhavor kargadir handznazhoghovi gortsuneut'yuny, Astvatsabanut'yan fakultet, Taregirk', 2015, ZH, ej 135-141: **(in Armenian)**

Behbudean 2005 - Behbudean S., Vawyeragrer hay yekeghets'u patmut'ean, girk' ZHG, Georg Ye Sureneants' Kat'voghikos Amenayn hayots' (1847-1930), p'astat'ght'eri yev niwt'eri zhoghovatsu, Yerevan, Mughni hrat., 2005, 712 ej: **(in Armenian)**

Bozoyan 2003 - Bozoyan A., Hayots' yekeghets'u patmut'yan hetazotut'yan khndirneri shurj (vaveragitakan ts'anker), Hayagitut'yan ardi vichaky yev nra zargats'man herrankarnery, hayagitakan mijagayin hamazhoghov, Yerevan, 2003, ej 254: **(in Armenian)**

Leo 1902 - Leo, Yovsep' kat'voghikos Arghut'ean, tp. T. M. Rrotineants'i, T'iflis, 1902, 228 ej: **(in Armenian)**

Kostandyan 2003 - Kostandyan E., Maghak'ia Ormanyani patmagitakan hayats'k'nery, Hayagitut'yan ardi vichaky yev nra zargats'man herrankarnery, hayagitakan mijagayin hamazhoghov, Yerevan, 2003, ej 257-259: **(in Armenian)**

Kostandyan 2008a - Kostandyan E., Mkrtich' Khrimyan.hasarakakan-k'aghak'akan gortsuneut'yuny, HH GAA PI hrat., Yerevan, 2008, 459 ej: **(in Armenian)**

Kostandyan 2008 - Kostandyan E., Garegin Srvandztyants' (Kyank'y yev gortsuneut'yuny), HH GAA PI hrat., Yerevan, 2008, 200 ej: **(in Armenian)**

Hayastani azgayin arkhiv – Arshak Ch'vopanyani f. 113, ts'. 1, g. 20, t'. 2: **(in Armenian)**

Hatityan 1978 – Hatityan A., Hay azatagrakan sharzhumnery 1780-1800 t'vakannerin yev Hovsep' ark'episkopos Arghut'yani kyank'n u gortsuneut'yuny, Ejmiatsin, t'iw Y-T', 1978, ej 72-81: **(in Armenian)**

Maghalyan Vladimir, Vaveragrer hay yekeghets'u patmut'yan (1921-1938 t't'.), kazmogh S. A. Behbudyan, ej 207-211: http://www.old.ysu.am/files/21V_Maghalyan-1457617482-.pdf **(in Armenian)**

Sargsyan 2016 - Sargsyan S., Emma Kostandyan, Drvagner Maghak'ia ark'episkopos Ormanyani kyank'its' yev gortsuneut'yunits', Hayagitut'yan harts'er, N 2, 2016, ej 152-156: **(in Armenian)**

T. Ararat k'ahana Poghosyan 2015 - T. Ararat k'ahana Poghosyan, Gyut avag k'ahana Aghanyants'i kyank'n u gortsuneut'yuny (Hamarrot urvagits), Patmut'yun yev mshakuyt', N 1, 2015, ej 150-161: **(in Armenian)**

Ormanean Maghak'ia, Azgapatum, h. A, https://digilib.aua.am/book/3250/3800/24450/%D4%B1%D5%A6%D5%A3%D5%A1%D5%BA%D5%A1%D5%BF%D5%B8%D6%82%D5%B4.%20%D5%B0%D5%A1%D5%BF%D5%B8%D6%80%20%D4%B1 **(in Armenian)**

Ormanean 1914 - Ormanean M., Azgapatum, h. B, hrat. V. yev H. Ter-Nersesean, Kostandnupolis, 1914, ej 3376: **(in Armenian)**

Tunyan 2007 - Tunyan V., Zashchitnik otechestva - Katolikos Vsekh Armyan Nerses Ashtaraketsi, 1826 - 1857 gg., Sv. Echmiadzin, Yerevan, 2007, 440 s. http://armenian-church.org/images/books/4bk13katolikos.pdf **(in Russian)**